Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
պատասխաններ՝ 11-րդ դասարան

1. Առասպել է Հայաստան աշխարհը, **առասպել՝** յուրօրինակ բնությամբ, իր գոգում առասպելաբանող ժողովրդով՝ **օժտված** վառ ու երկնածին երևակայությամբ և **ասացողի** շնորհքով: Նա հեքիաթներ է հյուսել, զրույցներ՝ իր հանճարների մասին, և նրանցից **մեկն** էլ աստվածընտրյալ **Մոմիկն** է՝ Նորավանքի անմահ կերտողը: 8

Ասում են՝ Մոմիկը սիրահարվում է Սյունյաց իշխանի գեղատեսիլ **դստերը**: Լուրը լսելուն պես զայրացած իշխանը (ի դեպ, նա խիստ դեմ էր այդ միությանը) կանչում է Մոմիկին և ասում.4

- Կանչել եմ՝ տեղեկացնեմ պայմանիս մասին: **Զորաբերանին՝** բարձր լեռան՝ **մացառուտով** ծածկված տափարակի **եզրին**, նմանը չունեցող եկեղեցի կառուցես՝ երդվում եմ՝ աղջկաս քեզ կտամ:6

Մոմիկն արագ գործի է անցնում: Նա իր՝ հրաշքներ գործող մոգական **ձեռքերով** քարերին ասես շունչ ու հոգի էր տալիս: Սկզբում կառուցեց գավիթը, **հետո՝** վանքն ամբողջությամբ, ապա սրբազան **երկյուղածությամբ** կամարաձև մուտքի ճակատին քանդակեց **Աստվածամորը՝** Հիսուսը գրկին, իսկ հղկված ժայռաբեկորներին՝ նրբակերտ խաչքարեր՝ բոլորված ասեղնագործ ժանյակներով: 8

«Չգիտեմ՝ **ինչպես** մերժեմ այս աղքատ արհեստավորին,- զօրուգիշեր մտմտում էր իշխանը՝ հիանալով շքեղ կառույցով: - Չէ՞ որ խոստացել եմ»: 4

Ու ելքը գտավ. նա կանչեց ծառային ու խստիվ պատվիրեց՝ ինչ-որ հնարքով սպանի Մոմիկին: Եվ, ավա՜ղ, կատարվեց չարի կամքը. գողեգող մոտենալով՝ ստրկահաճ սպասյակը հրելով ցած գցեց վանքի գմբեթին կանգնած վարպետին, **որ**, ընկնելով ահռելի բարձունքից, մահացավ հենց իր քանդակած խաչքարերի վրա:

Տաշված վերջին քարը **դարձավ** նրա շիրմաքարը: 10

2. **առասպել**-ստորոգելի, **օժտված**- որոշիչ, **ասացողի**- հատկացուցիչ, **մեկն**-ենթակա, **Մոմիկն**-ստորոգելի, **դստերը**- հանգման խնդիր, **Զորաբերանին**- տեղի պարագա, **մացառուտով**-ներգործող խնդիր, **եզրին**-պարագայական բացահայտիչ, **ձեռքերով** – միջոցի խնդիր, **հետո**-ժամանակի պարագա, **երկյուղածությամբ** – ձևի պարագա, **Աստվածամորը**-ուղիղ խնդիր, **ինչպես** – ձևի պարագա, **որ** – ենթակա, **դարձավ** - հանգույց

3. **Էլ**- համ. շաղկապ / մակբայ, **հետո**- մակբայ / կապ, **որ**- հար. դերանուն / ստոր. շաղկապ, **հենց**- սաստկական վեր./ ստոր. շաղկապ

4. ***կնդրուկ***-*անուշահոտ խեժ,* ***մուճակ***- *մի տեսակ ոտնաման, հողաթափ,* ***ունելի***-*աքցան,* ***հերյուն***-*մեծ ասեղ, մախաթ,* ***անթրոց***-*կրակը խառնելու ձող, կրակխառնիչ,* **տարմ**-թռչնախումբ, երամ, նաև՝ այլ կենդանիների խումբ, ***ծործոր***-*1.ձոր,ձորակ, 2.խորշ, խոռոչ, 3.լեռների վրա գոյացած նեղ հեղեղատ,* ***ծեքծեքել***-*պչրել, սեթևեթել, կոտրատվել,* ***ձորձ***- *ցնցոտի, քուրձ փալաս, հնամաշ շոր,* **ծխնի** - դուռը շրջանակին ամրացնող հեղույս

5. **ինքնագործունեություն-գործարար, հիմնարկեք-հիմնարար, եռավանկ-վանկարար, կեցություն-կենարար, ամենաբարի-բարերարա, լուսնեղջյուր-լուսարար, առտնին-տնարար, աղոթագիրք-աղոթարար, ամենափրկիչ-փրկարար, ահազդու-ազդարար:**

6. **ոգորել**- պայքարել, մաքառել,
տոգորել- համակել,պարուրել
տնօրենություն-տնօրենն իր տեղակալներով
տնօրինություն- տնօրինելը
կազմակերպական-կազմակերպելուն վերաբերող
կազմակերպչական- կազմակերպիչին վերաբերող
լիիրավ- բոլոր իրավական իրավունքներն ունեցող
լիակատար-ամբողջական, լիովին, լրիվ, ոչ մասնակի, անսահմանափակ, բացարձակ, անթերի, կատարյալ

7. **լեզու**- լեզու թրջել, լեզու առնել, լեզու թափել, լեզու գտնել, լեզու դարձնել, չար լեզու, լեզուն քոր գալ, լեզուն չհասկանալ, լեզուն կուլ տալ,
լեզվի կապերը արձակել, լեզվի տակ չմնալ,
լեզվին տալ, լեզվին կապ դնել,
լեզվով խայթել, լեզվով համոզել
լեզվից թույն թափել, լեզուն ատամներում պահել, լեզվից թույլ, և այլն

Գնահատման չափանիշներ – 11-րդ դասարան

Հարց 1. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
Հարց 4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
Հարց 7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:

2-րդ առաջադրանքից սկսած՝ ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1, կետադրականի համար 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: